

Հոմանիշէյն. փնջիլին (Ա. Մակ. Ա, 23. Առկ. ԻԳ, 31. Ոսկ. Մտթ. Ա, 146), որ կը նըշանակէ կիսագնդաձեւ տափարակ բաժակ մը, առանց կանթից ու պատուանդանի, ինչպէս կը տեսնենք արեւմտեան ու եզրիպտական հնութեանց մէջ (Գար. Գ, 434. Վիգ. Բ, 1075). Եւ այս պատճառաւ կը հանգչի «ի մատունս» (Փաւս. 233. Ագթ. 376) կամ «ի ծայրս մատանց» (Նար. 75): Բոլոր հին ազգաց քով կը հանդիպինք ասոր: Շապուհ կոչնոց ժամանակ իւր առջեւ կը դնէր «գտաշա՛» որոյ վրայ նկարել տուած էր զքաջն Մուշեղ, ի վարձ անոր ասպետական վարման իւր կանանց հետ (Փաւս. 190): Տերենտի ընթրեաց մէջ Պապ արքայն «ունէր գտաշո ոսկի՛» ուսկից կ'ըմպէր հանդարտօրէն (նոյն, 233). նշան՝ թէ բաւական առատ էր ընդունակութիւնը: Միջին դարուն Հայոց մէջ կը յիշուին աւելի խոշորներ, «տաշտ մեծամեծ» (Լծ. Պհ. Գ), որ սակայն մեզ յատուկ եւ կամ նորութիւն մը չէր. Աղեքսանդրի պատմութեան մէջ ծանօթ են արդէն ոսկեղէն եւ արծաթեղէն այնպիսի տաշտեր, «յորմէ կարիցէ այր ութեղ զգաստ արբենալ» (116):

Սկան: Կը հանդիպինք ասոր լոկ մովսիսական աշտանակի նկարագրին մէջ, որոյ ստեղանց ծայրերը կային «սկանքն»